ՄԱՄՈՒԼ

«Մեր Ձայնը» № 29 «Տխուր նշաններ» վերնագրով յօդուածի մէջ հետևեալն է գրում.

«Արարատ»ի դեկտեմբերի համարի թղթակցմի վրայ տպուած է. «Հրամանաւ Տ. Տեղակալի Հայրապետութեան Հայոց»: Մենք չիմացանք թէ ո՞ւմ կարգադրութեամբ է այս խօսքերը տպւում: Եթէ «Արարատ»ի խմբագրի բարեհաճ կամքն է այդ-ոնրան աններելի է, իսկ եթէ Սինոդի նախանդամ՝ Սուրէնեան տրբազանն է այդպէս պահանջում, այդ կնշանակէ, որ մենք կանգնած ենք մի նոր փոթորկի սպառին»:

Մենք կարող ենք մեր պաշտօնակցին հանգստացնել, որ այս խնդրում փոթորկի ոչ մի նշան չկայ: Աւելորդ սրատեսութիւն պէտք չէ: «Գրել տեղակալ Հայրապետութեան Հայոց», չի նշանակում՝ «վաղն էլ ala Երեմիա ասել, որ տեղակալը արտօնուած է Հայրապետական բոլոր իրաւունքներով»: Այդ ձևը սովորական է տեղակալների համար, որին ապացոյց կարող ենք յիշել հանգուցեալ Մակար կաթուղիկոսի տեղակալութեան ժամանակը: Ներսէս Պատրիարք Վարժապետեանը իւր թղթերի մէջ յիշում է նրան «Տեղակալ կաթուղիկոսութեան Արարատեան Մ. Աթոռոյ կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի» կամ Տեղակալ կաթուղիկոսութեան ամենայն Հայոց»:*

* Տես Բաբգէն վարդապետի Կաթուղիկոսական ընտրութիւն և կանոններ. Վաղարշապատ 1908 եր. 84, 110: